

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,  
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ  
Սուրբ Յակոբ  
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ

ԱՐՁԱԳԱՆԳ

[www.sourphagop.org/մաշտոցի\\_արձագանգ](http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ)



ԻԳ տարի (23-ամեակ)  
2016-ի Տարեկան Բացառիկ

Հաւատք

| Կրօն

| Եկեղեցի

| Լեզու

| Մշակոյթ

---

# Բովանդակություն

Խօսք՝ Հովիտի եւ Հոգաբարձութեան	Էջ 3
Նկարներ՝ Կիրակնօրեայի 2015-16 տարեշրջանէն	Էջ 4-8
Մեր Խօսքը	Էջ 9
<a href="http://www.sourphagop.org">www.sourphagop.org</a>	Էջ 10
Հակիրճ Տեղեկութիւններ 2015-16 Տարեշրջանի Մասին	Էջ 11-13
Ձեռնարկներ եւ Արտադասարանային Աշխատանքներ՝ Ժամանակագրական Շարքով	Էջ 14
Աշակերտական Ներկայութեան Տախտակներ	Էջ 15
2015-16 Տարեշրջանի Կազմը	Էջ 16



# ՄՈՒՐԲ ՁԱԿՈՐ ԱՌԱՋ. ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

9 Մայիս 2016

Սիրելի տնօրէնութիւն,  
ուսուցչական կազմ,  
ծնողներ եւ աշակերտ-աշակերտուհիներ  
Ս. Յակոբի Կիրակնօրեային,

Անցեալ տարի Հայոց Յեղասպանութեան 100-ամեակն էր, երբ ազգովին ուխտեցինք առաւել զօրացեալ կամքով շարունակել արդարութեան պայքարը՝ մինչեւ յաղթանակ:

Որպէս հայեցի դաստիարակութեան կարեւոր օճախ՝ այն պայքարին մէջ ի՞նչ կ'ակնկալուի Կիրակնօրեայէն: Յարատեւել իր առաքելութեան մէջ իբր Աստուած-ա-շունչ կրթարան, իբր ներշնչարան հայ հոգեւոր ժառանգութեան եւ ինքնութեան արժէքներուն, եւ իբր ա՛յն արուեստանոցը՝ ուր մանուկներու եւ պատանիներու հոգիներուն մէջ կը քանդակուին մեր եկեղեցական եւ ազգային պատմութեան ու մշակոյթին մեծ դէմքերը:

Ս. Յակոբի համայնքը շատ ուրախ է, որ իր Կիրակնօրեային համար ամբողջանուէր տնօրէն մը ունի՝ յանձին Պրն. Թորոս Պապիկեանի. նոյնպէս ուրախ է իր նուիրեալ ուսուցչական կազմով եւ օգնականներով: Այս մշակներուն ծառայութիւնը թանկագին սատար է հայ ժողովուրդի արդարութեան պայքարին մէջ. անոր ուղիղ ընթացքին բարոյական որակ մը կը բերէ: Ս. Յակոբի համայնքը նաեւ ուրախ է, որ ունի այնպիսի ծնողներ՝ որոնք գիտակից են, թէ իրենց զոհողութիւնը բարիք պիտի ըլլայ թէ՛ իրենց զաւակներուն եւ թէ՛ պայքարի ընդհանրական ճամբուն:

Սակայն Հովիւ եւ Հոգաբարձութիւն մեր սպասումն է բազմացումը ծնողներու եւ աշակերտ-աշակերտուհիներու, որովհետեւ հայեցի դաստիարակութեամբ սնած նոր սերունդն է մեր ապագան եւ յաջողութիւններուն կերտիչը:

Շնորհակալութիւններ տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, նաեւ գնահատանքներ ծնողներուն եւ աշակերտ-աշակերտուհիներուն:

Բարի արձակուրդ եւ բարի վերադարձ:

Հաւագոյն մաղթանքներով՝

ՀՈՎԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Ս. ՅԱԿՈՐ ԱՌԱՋ. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ


# ՆԿԱՐՆԵՐ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2015-16 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ



Բողբոջ-Կոկոն Դասարան



Ծաղիկ դասարան



Նախակրթարան Ա. և Բ. դասարաններ




Նախակրթարան Գ. և Դ. դասարաններ




Նախակրթարան Ե. դասարան



Երկրորդական Ա. դասարան



Երկրորդական Դ. դասարան



Երկրորդական Ե. դասարան (Օգնականներ)

ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅԻ 2015-16 ՏԱՐԵՇՐՉԱՆԷՆ





## ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ եւ ամբողջացնել մեր 36-րդ տարեշրջանը: Այս տարի նաեւ 23-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ անցեալ Սուրբ Յակոբի տօնին օրը՝ Դեկտեմբեր 2015-ին մեր կայքէջին՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)-ին 15-րդ տարեդարձն էր:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը փսայ հիմը մեր եկեղեցոյ պայծառութեան: Այն եկեղեցիները որոնց մանուկները արգելքներ ունին երթալու Յիսուսին, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պետք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Ասկէ 87 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, Յիսուսի այս խօսքը որպէս նշանաբան ունենալով մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն եւ Քրիստոսի խօսքով կը սաստէր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը թերեւ յառաջխաղացք արձանագրեց 60-էն 62-ի բարձրանալով: Սակայն, իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնը 40-էն 36-ի նուազեցաւ: Այս տարուան ընթացքին մեր երկրորդական Դ. եւ Ե. օգնականներու խումբը յոյս կը ներշնչէ մեզի ապագայի նկատմամբ:

Աստուծոյ կամքով՝ մեր 37-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին՝ որ այս տարի Սեպտեմբեր 11, 2016-ին է: Մինչ այդ, բարի արձակուրդ կը մաղթենք ձեզի:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

# www.sourphagop.org

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 16-րդ տարին մտաւ 2015-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Մեր կայքէջին գրքերու բաժնին մէջ կը գտնէք.

Ազգապատում (Ա. Բ. եւ Գ. հատորներ), Ժամագիրք, Սբ. Պատարագ, Կրօնական Գիտելիքներ, Պատարագամատոյց եւ Քրիստոնէայ Հայաստան հատորները:

Աւելցուցինք նաեւ երգերու եւ շարականներու բաժին մը ուր կը գտնուենք մեր Կիրակնօրեայ Դպրոցին մէջ սորված երգերը:

Անշուշտ մեր կայքէջին վրայ նաեւ գտնուեցինք «Մաշտոցի Արձագանգ»ի բոլոր թիւերը:

Ինչպէս կը տեսնէք, մեր կայքէջին ենթաբաժանումներն են.

Մեր մասին, Լրահոս, Սուրբեր, Տօներ, Գիրքեր, Ժամանակացոյց, Մաշտոցի Արձագանգ, Կապեր, Events, Survey, Blog, Armenian Font, Gallery:

**Հայաստանեայց Եկեղեցոյ**



**Սուրբ  
Յակոբ**

**Կիրակնօրեայ  
Դպրոց**






---

Տոն ▼ | Մեր մասին ▼ | Լրահոս ▼ | Ս. Ծնունդի Նկարներ ▼ | Սուրբեր ▼ | Տօներ ▼ | Գիրքեր ▼ | ժամանակացոյց ▼

Մաշտոցի Արձագանգ ▼ | Կապեր ▼ | Events ▼ | Survey ▼ | Blog ▼ | News ▼ | Armenian Font ▼ | Gallery ▼

**Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոց**

**2015-16 տարեշրջան**

Միջոց	Մեր Բազմութեան	Յայն	Նախ Ա. եւ Բ.	Նախ Գ. եւ Դ.	Նախ Ե. եւ Զ.	Երկր. Ա. եւ Բ.	Երկր. Գ. եւ Դ.	Տեղի Ե.
10:30	11:00	Հայր Մկր. Մարգարեան, Կիրակնօրեայ Դպրոցներու Մարտիրոս						
11:00	11:08	Լազարանային		Երգեցողային		Լազարանային		Օգնական
11:30	11:48	Պատարագ	Սրբեցողային	Լազարանային	Պատարագ	Պատարագ	Օգնական	Օգնական
11:40	12:22	Պատարագ	Սրբեցողային	Լազարանային	Պատարագ	Պատարագ	Սրբեցողային	Օգնական
12:20	12:30	Պատարագ	Սրբեցողային	Լազարանային	Պատարագ	Պատարագ	Սրբեցողային	Օգնական
12:50	13:10	Գեղեցիկ մեր Կիրակնօրեայ Դպրոցներու - Մտածելու քառյակներով տարբեր սրբանշաններով						

Ցանկեալ տեղեկութիւններու համար դիմել Տնօրէնին՝

Թոքոս Պապիկեանին [director@sourphagop.org](mailto:director@sourphagop.org)







# ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## 2015-2016 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Առաքելական Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

### 36-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2015-16 տարեշրջանը 36-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին՝ 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 36-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի: Իւրաքանչիւր տարեշրջան կը սկսի Խաչվերացի Կիրակին եւ կը տեւէ մինչեւ Մայիսի 3-րդ Կիրակին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3, նախակրթարանի 6 դասարաններ ինչպէս նաեւ երկրորդականի 3 դասարաններ, որոնք գործեցին 8 խմբաւորումներով:

### 23-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2015-16 տարեշրջանի ընթացքին նաեւ հրատարակեցինք, 23-րդ տարին ըլլալով, մեր պարբերաթերթ, «Մաշտոցի Արձագանգ»ը՝ ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ  
[http://www.sourphagop.org/մաշտոցի\\_արձագանգ](http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ) էջին վրայէն:

### 15-ամեակ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

### ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2015-16 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 62 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 36 բաժնուած 8 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2015-16 տարեշրջանին ունեցանք 8 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողոքոջ եւ Կոկոն  
Օաղիկ

Նախակրթարան Ա. եւ Բ.  
Նախակրթարան Գ. եւ Դ.  
Նախակրթարան Ե.  
Երկր. Ա.

Երկրորդական Դ.  
Երկրորդական Ե.

Երգերու եւ շարականներու ուսուցում

«Մաշտոցի Արձագանգ»

Տնօրէն եւ Կայքէջի պատասխանատու

Դաստիարակ

Թամար Գիզիրեան,  
Թամար Գիզիրեան  
Օգնական՝ Ռիթա Խշխշեան  
Թալին Բարսեղեան  
Յասմիկ Նաճարեան  
Շողիկ Նաճարեան  
Առէն Պապիկեան  
Օգնական՝ Միւր Պանքեան  
Թորոս Պապիկեան  
Թորոս Պապիկեան

Վաչէ-Սագօ Պոյաճեան՝  
Օգնական՝ Բասգալ Տեւերճեան

Թորոս Պապիկեան

Թորոս Պապիկեան  
Օգնական՝ Սեւակ Պապիկեան

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արձարծուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2015-16 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Սկիզբ	Վերջ	Բողոքոջ-Կոկոն	Օաղիկ	Նախ. Ա. եւ Բ.	Նախ. Գ. եւ Դ.	Նախ. Ե. եւ Զ.	Երկր. Ա. եւ Բ.	Երկր. Գ. եւ Դ.	Երկր. Ե.
10:30	11:00	Հ Ա Ի Ա Ք							
11:00	11:08	Հայր Մեր, Մաղթանքներ, Կիրակնօրեայ Դպրոցներու Մաղթերգ							
11:10	11:45	Լսարանային			Երգեցողութիւն		Լսարանային		Օգնական
11:47	12:22	Ձեռային	Երգեցողութիւն		Լսարանային		Դաս.	Դաս.	Օգնական
12:25	13:00	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Դաս.	Երգեցողութիւն		Օգնական
13:02	13:10	Կեցցէ՛ մեր Կիրակնօրեայ Վարժարան - Մասն եւ բաժին եղիցի սուրբ պատարագիս							

Լսարանային բաժին

Տերունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան 4 խումբերու.

- ա. Մանկապարտեզի Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ դասարանները
- բ. Նախակրթարանի Ա եւ Բ. դասարանները
- գ. Նախակրթարանի Գ., Դ., Ե. եւ Զ. դասարանները
- դ. Երկրորդական:

Պահը ընթացաւ հետեւեալ ձեւով.

Ոսկեղէն համարներու կամ Մաղմոսներու ուսուցում  
Բարոյալից պատմուածքներու ներկայացում  
Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում  
Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն  
«Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:

Դասարանային բաժին


Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:




## ՉԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

13 Սեպտեմբեր 2015	Տարեսկիզբ եւ վերամուտ:
20 Սեպտեմբեր 2015	Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդութիւն ստացաւ:
11 Հոկտեմբեր 2015	Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր:
13 Դեկտեմբեր 2015	Վարժարանի աշակերտութիւնը գեղարուեստական յայտագրով մասնակցեցաւ Ս. Յակոբի անուանակոչութեան արանդական ճաշկերոյթին:
3 Յունուար 2016	Ամանորի եւ Սուրբ Ծննդեան զոյգ տօներու հանդիսութիւն, ուր տեղի ունեցաւ աշակերտներուն պատրաստած գեղարուեստական ելոյթը: Հանդիսութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ եւ նուէրներու բաշխումով:
7 Փետրուար 2016	Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն :
6 Փետրուար 2016	Դպրոցի Տնօրէնութիւնը, Ուսուցչական կազմը եւ օգնականները միասնաբար պատրաստեցին Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցին Տաղաւարը Ազգային Առաջնորդարանի կազմակերպած Մանկական Ե. Փառատօնին ընթացքին: Հոն ներկայացուեցան Կիրակնօրեայի Կայքէջը, «Մաշտոցի Արձագանգ»ը, Հայ Եկեղեցոյ մասին ծանօթութիւններ, Կիրակնօրեայ Դպրոցի մանկական պահքը, Բարի սամարացիին առակը:
Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը.	
Ա. շաբաթ	Chips
Բ. շաբաթ	Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր
Գ. շաբաթ	Տուրմ
Դ. շաբաթ	Կազային խմիչքներ
Ե. շաբաթ	Շաքար
Զ. շաբաթ	Ծամոն
Է. շաբաթ	Հակիթ
20 Մարտ 2016	Դպրոցը փակ էր Ծաղկազարդի առիթով:
27 Մարտ 2016	Դպրոցը փակ էր Ս. Յարութեան տօնին առիթով:
24 Ապրիլ 2016	Դպրոցը փակ էր Մեծ Եղեռնի յիշատակին առիթով
22 Մայիս 2015	Ամալերջի Հանդէս:

## Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2015-16 տարեշրջանի իրաքանչիւր դասարանի արձանագրություն եւ միջին ներկայություն



2015-16 տարեշրջանի իրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայություն

# **ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ** **ԻԳ. ՏԱՐԻ**

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի  
ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ  
համացանցին վրայ  
[www.sourphagop.org/մաշտոցի\\_արձագանգ](http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ)

## **Ջայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի 2015-16 տարեշրջանի կազմը**

Առէն Պապիկեան  
Թամար Գիզիրեան  
Յասմիկ Նաճարեան  
Շողիկ Նաճարեան  
Թալին Բարսեղեան  
Վաչէ-Սագօ Պոյաճեան  
Թորոս Պապիկեան